

բագրութիւններ բացուեցան, ու զանոնք հաւաքելու համար ժողովներ հաստատուեցան գլխաւոր լրագրաց խմբագրանոցներուն մէջ: Տէրութիւնը որ դէպի Ասորեստանի եզերքը երկու շոգենաւ դրկեց Ցունաց հպատակները պաշտպանելու եւ ուրիշ քրիստոնեայքը ծրի Ցունաստան փոխադրելու համար: Այն շոգենաւով Ցունաց տէրութիւնն կողմանէ հաւաքուած փողերը երկու բժիշկ զանազան դեղերով, ուտելիքներ եւ հագուստներ դրկուեցան: Ցեսոյ երկու շոգենաւ եւս գնաց: Երբոր Գաղղիոյ Ասորեստան զօրք յուղարկելուն լուրը Աթէնք հասաւ՝ Ոթոն Թագա-

ւորը գլխաւոր տէրութիւնն ուղարկեց որ Գաղղիոյ զօրացը ինտ ինքն ալ 1000 հոգւոյ չափ զօրք յուղարկէ Ասորեստան: Գաղղիան պատասխաննեց որ ինքն առ այժմ Հելլենացւոց խորհուրդ չըտար այս արշաւանցը գործակից լինել, այլ պատեհ ժամանակ մը եղածին պէս՝ Ցունաց տէրութիւնն իմաց կուտայ: Անգղիան Հելլենացւոց այն գործոյն մէջ մտնելուն ամենեւին չյօժարացաւ. միայն այսքան ըստ որ Գաղղիան եւ Խուսատանը Ցունաց տէրութիւնն առաջարկութիւնն ընդունելու լինին՝ ինքն ալ անոր ցանկութեանը արգելք ընելու միտք չունի:

## Ն Ե Բ Ք Ի Ն Լ Ա Ւ Բ Ե Բ

Կայսերական վճռով որոշուած է որ այսուհետեւ Խուսաց հպատակ վաճառականաց որդիքը տամնըեօթը տարեկան որ լինին՝ Հրաման ունենան վեց տարուան համար օտար երկիրներ երթալու՝ դրսի վաճառատանց մէջ գործնական կերպով առուտառը սովորելու համար. — Աժտէրխանի մեծանուն եւ մեծապատիւ Սարգսեան Մկրտիչ Աղան, որ այն քաղաքի գաւառական գպրոցին արդոյ տեսուչն է,

Հաւանութեամբ եւ հաճութեամբ Վեհափառ Կայսեր՝ Աժտէրխանի քաղաքական վարժարանին (կամնազիային) մէջ մշանջենաւորապէս երկու հայազգի աժտէրխանցի պատանեաց ուսում պիտի տայ իւր փողովը, եւ այն աշակերտները պիտի ըսուին Սարգսեան սանե՛: Այս փողը աղահովելու համար՝ նուիրեր է իւր քարաշէն փառաւոր տունը, այսինքն անոր եկամուտը որոշեր է իւր երկու սաներուն դաստիարակութեանը ծախքին:

## Ո Գ Ի Ն Հ Ա Յ Կ Ա Ա Ն.

### Ե Ր Գ

(ԱՐԵԱԿ Բ, Արտրուած Ե, Տեսիլ 2:)

1.

Իզնւր են իզնւր, բըսմաւոր,  
Բսպառնալիք քո ամենայն.  
Ոչ, քո շըզթայք չեն զօրաւոր  
Ցընկճել զոգիս մեր Հայկական:

2.

Բըմարմին՝ միայն զայս մարմին  
Կարես գերել քեզ ինախատ.  
Սակայն ոգիք մեր երկնային.  
Սիրտք Հայկազանց են միշտ ազնա:

3.

Ազնատ են, ազատ մեր լեզուք,  
Մազթել ըզշանթս Արդարութեան  
Դգլուխ ձեր, ով արիւնարբուք.  
Որ աւերէք ըղչայաստան:

4.

Իդըժնիս անկցին թըշնամիք,  
Անհետասացին մինչ յաւիսեան.  
Կեցցեն Արքայ եւ Հայրենիք,  
Կեցցէ անմահ մերս Հայաստան: